

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է
ՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

18.08.2014թ.

ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանն այցելել է Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի Կոտայքի մարզային երիտասարդական կենտրոն: Երիտասարդական կենտրոնում մարզպետի տեղակալը հանդիպում է ունեցել <<Բազե 2014>> համահայկական երիտասարդական հավաքի <<Կոտայք>> ջրկառի կազմում ընդգրկված երիտասարդների հետ:

Համահայկական երիտասարդական հավաքին մասնակցելու նպատակով Ծաղկաձոր մեկնող երիտասարդներին փոխանցելով Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանի շնորհավորանքը՝ մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանն իր խոսքում ընդգծել է <<Բազե>> երիտասարդական նախաձեռնության կարևորություններն ու մարզից ընտրված ինը երիտասարդներին մաղթել հաճելի օրեր հավաքի ընթացքում:

Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանը հանդիպման ընթացքում պատասխանել է նաև երիտասարդների կողմից տրվող հարցերին և նրանց մաղթել բարեհաջող մասնակցություն <<Բազե 2014>> համահայկական երիտասարդական հավաքին: